ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՎԱԳՅԱՆ ՆՈՐԱՅՐ ԱՐՏԱՇԻ

ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2023

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АВАГЯН НОРАЙР АРТАШОВИЧ

КРИТЕРИИ ОСОБЕННОСТЕЙ ОТДЕЛЬНЫХ ВИДОВ АДМИНИСТРАТИВНОГО ПРОИЗВОДСТВА

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02. – «Публичное право – конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление»

ЕРЕВАН – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Բ. Դանիելյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գ. Գ. Հարությունյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ս. Ս. Բադալյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-Ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ. հուլիսի 6-ին ժ. 14^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈԿ-ի 001 իրավաբանական մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան, 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2023թ. մայիսի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ **Ժ. Ա. Ստեփանյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, професор **Г. Б. Даниелян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **Г. Г. Арутюнян**

кандидат юридических наук, доцент **С. С. Бадалян**

Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита состоится 6-ого июля 2023г. в 14^{30} часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, Алека Манукяна, 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 25-ого мая 2023г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, ассистент **Ж. А. Степанян**

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Վարչական իրավունքի արդի հիմնախնդիրներից են վարչական վարույթը կարգավորող օրենսդրության համակարգմանն ու ունիֆիկացմանը (միատեսակությանը) առնչվող մի շարք հարցադրումներ, որոնց անդրադարձել ենք աշխատությունում, ընդ որում թե՛ իրավաստեղծ, թե՛ իրավակիրառ գործընթացների համատեքստում:

Վարչական վարույթը կարգավորող օրենսդրության սահմանադրական և միջազգային իրավակարգավորումների, ինչպես նաև արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ոլորտի գերխնդիրն է երաշխավորել և ներդաշնակել վարչարարության արդյունավետության և անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հավասարակշռումը:

Սա հատկապես ակնառու է դառնում այն ժամանակ, երբ վարչական վարույթը կարգավորող օրենսդրությունը ներկայացվում է երեք տարբեր մոդելներով՝ 1) ունիֆիկացված (վարչական վարույթը կարգավորված է մեկ իրավական ակտով), 2) դիֆերենցված (տարբեր իրավական ակտերով կարգավորված են առանձին վարչական վարույթներ) և 3) համադրված կամ խառը (վարչական վարույթը կարգավորված է մեկ իրավական ակտով, սակայն տարբեր իրավական ակտերով կարգավորված են առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները):

Հարկ է նկատել, որ եվրոպական վարչաիրավական գիտության կողմից ընդհանուր առմամբ ճանաչված է վարչական ընթացակարգը մեկ օրենքում կարգավորելու նպատակահարմարության վերաբերյալ դիրքորոշումը, ընդ որում այս մոտեցման կողմնակիցները նշում են, թե այն կարող է ապահովել պետական կառավարման թափանցիկ, կանխատեսելի գործունեությունը և թույլ է տալիս երաշխավորել մասնավոր անձանց իրավունքներն ու օրինական շահերը հանրային իրավական ոլորտում (օրինակ՝ ԳԴՀ, ԱՄՆ, Իտալիա և այլն), իսկ այն երկրներում որտեղ առկա չէ մեկ միասնական օրենսդրական ակտ (օրինակ՝ ՌԴ), կարծում են, որ այդպիսի օրենսդրության բացակայությունը նվազեցնում է պետական կառավարման, հանրային ծառայության գործունեության մակարդակը, թույլ չի տալիս այդ երկրներին մոտենալ լավ կառավարման եվրոպական չափանիշներին, պայմաններ է ստեղծում կոռուպցիոն ռիսկերի առկայության և պաշտոնատար անձանց կողմից անձանց իրավունքների ոտնահարման համար:

Իրավական մտքի կարծիքները միանշանակ չեն արդեն երրորդ՝ համադրված կամ խառը մոդելի վերաբերյալ, երբ միևնույն իրավական համակարգում գործում է վարչական վարույթը կարգավորող օրենսդրության

և՛ մեկ միասնական իրավական ակտ, և՛ առանձին տեսակի վարչական վարույթների վերաբերյալ իրավական ակտեր: Այս մոդելի դեպքում ի հայտ են գալիս բազմաթիվ իրավական հարցադրումներ, որոնց անդրադառնալն ու պատշաճ գիտական հետազոտություն կատարելն արդիական է, և ինչպես նշեցինք՝ կարևորագույն խնդիրներից է համարվում վարչարարության արդյունավետության և անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հավասարակշռումը: Չնայած մի շարք սոցիալ-տնտեսական իրողություններ անհրաժեշտություն են ստեղծում վարչական վարույթը կարգավորող օրենսդրությունում նախատեսելու առանձին տեսակի վարչական վարույթի առանձնահատկություններ, սակայն վարչական իրավունքի գիտությունում դրանց վերաբերյալ պատշաճ գիտական մեթոդաբանությամբ ուսումնասիրությունները սակավաթիվ են: Միայն առկա են առանձին վարչագետների կողմից դրան առնչվող կոնկրետ հարցերին վերաբերող գիտական հոդվածներ, իսկ հիմնախնդրին վերաբերող համալիր հետազոտություն չի կատարվել: Մինչդեռ, վարչական վարույթների իրավական կարգավորման առանձնահատկությունները ենթադրում են դրանցով կարգավորված հարաբերությունների առանձնահատուկ բովանդակություն, մասնակիցների իրավական տարբեր կարգավիճակներ, իրավունքներ ու պարտականություններ, որոնց վերաբերյալ վերլուծությունները վեր են հանում այնպիսի իրավական խնդիրներ, որոնք, իրենցից ներկայացնելով գործնական կարևորություն, պահանջում են նաև գիտականորեն հիմնավորված համապատասխան լուծումներ:

Այսպիսով, առանձին տեսակի վարչական վարույթների չափորոշիչների վերաբերյալ վերլուծությունները և դրանց գիտականորեն պատշաճ ձևակերպում տալը կարևոր է իրավական համակարգում անհարկի, իրավաչափ նպատակ չհետապնդող առանձին տեսակի վարչական վարույթներ չունենալու համար: Այդպիսի չափորոշիչների առկայությունն անհրաժեշտություն է, որոնք կարող են իրական երաշխիք հանդիսանալ իրավական պետությանը հարիր ընդհանուր հայեցակարգային մոտեցումներ ունեցող վարչական ընթացակարգեր ներդնելու և կիրառելու համար: Կարծում ենք, որ վարչարարություն իրականացնող մարմինների գործունեության արդունավետությունը և այդ գործընթացում անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը բավականին մեծ ուշադրության են արժանի, ուստիև առանձին տեսակի վարչական վարույթների և դրանց առանձնահատկությունների իրավասահմանման (իրավաստեղծ) ու իրավակիրառ գործընթացները անհրաժեշտ է, որ իրականացվեն ընդհանուր հայեցակարգի հիման վրա և երբեք չստանան իրավիճակային լուծումներ:

Բացի այդ, մեկ այլ ծայրահեղություն է, երբ իրավական համակարգում ներդրվում է մի իրավական ինստիտուտ, որը ձևավորված իրավակիրառ

դիրքորոշումներին համապատասխան, միանգամայն կարող է բնութագրվել որպես հանրային իրավունքի բնագավառի իրավահարաբերություն, սակայն օրենսդրի կողմից վերապահվում է մասնավոր իրավունքի բնագավառին: Այս դեպքում՝ խնդիրներն առաջանում են ինչպես արտադատական գործընթացներում, մասնավորապես, անհստակություն կիրառելի իրավական ակտերի, իրավահարաբերության սուբյեկտների կարգավիճակի հարցերում, այնպես էլ դատական գործընթացներում՝ անորոշություն ընդդատության, դատավարական կարգի որոշ հարցերում և այլն:

Վերը նկարագրված խնդիրները որոշ դեպքերում խոչընդոտում, իսկ այլ դեպքերում կարող են խոչընդոտ հանդիսանալ անձանց իրավունքների և ազատությունների իրականացման և արդյունավետ պաշտպանության համար, ուստի հիմնավորված է դրանց վերաբերյալ գիտական հետազոտություն կատարելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների չափորոշիչները» վերտառությամբ թեմայի արդիականությունը պայմանավորված է իրավական կարգավորման առանձնահատկություններ ունեցող վարչական վարույթների համակողմանի վերլուծություն իրականացնելու, դրանց առնչվող խնդիրները վեր հանելու, գիտականորեն հիմնավորված կարծիքներ առաջ քաշելու և համապատասխան առաջարկներ ներկայացնելու անհրաժեշտությամբ, որոնք կարող են պիտանի լինել հանրապետությունում իրականացվող առանձին տեսակի վարչարարության ընթացքում, առանձին տեսակի վարչական վարույթների իրավասահմանման (իրավաստեղծ) գործընթացում, ինչպես նաև դրանց նկատմամբ վարչական և դատական վերահսկողություն իրականացնելիս:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է գիտագործնական չափանիշների հիման վրա համակողմանիորեն ուսումնասիրել վարչական վարույթը կարգավորող ներպետական օրենսդրությունը, միջազգային փորձը, Հայաստանի Հանրապետությունում դրա իրավասահմանման և իրավակիրառման գործընթացները, այդ առնչությամբ առկա հիմնախնդիրները և դրանց վերաբերյալ կատարել ու առաջադրել հիմնավորված առաջարկություններ ու եզրահանգումներ, որոնք կարող են պիտանի լինել վարչական իրավունքի տեսական հիմքերը սույն հետազոտության առարկան կազմող հարցերի վերաբերյալ առավել համալիր դարձնելու համար, ինչն էլ կարող է նպաստել վարչական վարույթը կարգավորող օրենսդրության, վարչական մարմինների գործունեության և դրա նկատմամբ դատական վերահսկողությունը բարելավելուն և մարդու իրավունքների համակողմանի պաշտպանությունն ապահովելուն:

Ատենախոսության նպատակներին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել վարչական վարույթը կարգավորող սահմանադրա-

կան, միջազգային և օրենսդրական /ենթաօրենսդրական/ իրավակարգավորումները,

- հետազոտել վարչական վարույթը կարգավորող ներպետական օրենսդրությունը և ներկայացնել դրա գենեզիսը,
- բացահայտել վարչարարության հիմնարար սկզբունքների նշանակությունը վարչական վարույթը կարգավորող ներպետական օրենսդրության ձևավորման գործընթացում,
- հետազոտել առանձին տեսակի վարչական վարույթը պայմանավորող գործոնները,
- ներկայացնել առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների պարադիգման,
- կատարել առանձին տեսակի վարչական վարույթների, ինչպես նաև վարչական վարույթը կարգավորող օրենսդրության դասակարգում և ներկայացնել առանձնահատկությունների չափորոշիչները,
- հետազոտել և բացահայտել առանձին տեսակի վարչական վարույթների իրավականության ծավալն ու բովանդակությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահակտություններն են, իսկ առարկան՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահակտությունների չափորոշիչները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Վարչական իրավունքի առանցքային ինստիտուտներից վարչարարությանն ու վարչական վարույթին անդրադարձել են մի շարք ինչպես օտարերկրացի հեղինակավոր վարչագետներ, այդ թվում՝ պրոֆեսորներ Սաբինո Կասեզեն, Արմին Վոն Բոգդանդին, Դենիս Գալիգանը, Պետեր Հուբեռը, Կառլ Պետեր Զոմերմանը, Ջոանա Մենդեսը, Ռիչարդ Ստյուարտը, Բռամ Ակեռմանսը, Միռլինդա Բատալին, Հերվիգ Հոֆմանը, Բուկուրա Միխաեսկուն, Կոնստանտին Դավիդովը, այնպես էլ մի շարք հայրենակից վարչագետներ Գ. Դանիելյանը, Հ. Թովմասյանը, Վ. Պողոսյանը, Ռ. Եղյանը, Ս. Մուրադյանը, Գ. Մուղնեցյանը և այլն:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության նորմատիվ-իրավական հիմքն են կազմում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, միջազգային իրավական փաստաթղթերը, Սահմանադրական դատարանի որոշումները, օրենքները և այլ իրավական ակտերը:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքն են կազմում.

- վարչական իրավունքին, վարչական վարույթը կարգավորող օրենսդրությանը, վարչարարությանը և ընդհանրապես իրավագիտության խնդիրներին նվիրված աշխատությունները.
- Միավորված ազգերի կազմակերպության, «Ժողովրդավարություն

իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) և այլ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների և դրանց խորհրդատվական մարմինների՝ հետազոտության առարկային առնչվող վերլուծությունները, բանաձևերն ու հանձնարարականները.

- Սահմանադրական, Վճռաբեկ, վերաքննիչ և վարչական դատարանների դատական ակտերը:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր (ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ), այնպես էլ հատուկ (համակարգային վերլուծության, պատմական, իրավահամեմատական մեթոդները): Ատենախոսությունում հատկապես լայնորեն օգտագործվել է իրավահամեմատական մեթոդը, որի կիրառմամբ կոնկրետ հիմնախնդրի կապակցությամբ համեմատական վերլուծության են ենթարկվել արտասահմանյան երկրների իրավական ակտերում, հեղինակավոր միջազգային կառույցների փաստաթղթերում, ինչպես նաև իրավակիրառ ու դատական պրակտիկայում ձևավորված հիմնական մոտեցումները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ առանձին տեսակի վարչական վարույթների առանանձնահատկությունները՝ դրանց չափորոշիչների համատեքստում գիտական չափանիշներով ենթարկվել են համալիր ուսումնասիրության: Հետազոտության համար առաջադրված ինքնատիպ խնդիրների կատարման արդյունքում ձևավորվել են կարծիքներ ու կատարվել են եզրահանգումներ, որոնք, հանդիսանալով գիտական նորույթ, ամփոփ արտահայտվել են հեղինակի պաշտպանության ներկայացրած դրույթներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1) Առանձին տեսակի վարչական վարույթների առկայությունն ունի երկակի նպատակ. (1) վարչարարության առանձին ոլորտներում հանրային իշխանության գործառույթների իրականացման արդյունավետության ապահովումը, և (2) վարչարարության առանձին ոլորտների մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ու ազատությունների երաշխավորված իրացման ու պաշտպանության ապահովումը: Վարչական վարույթի կառուցվածքային կամ ընթացակարգային հատուկ կանոնները իրավական համակարգում պետք է միաժամանակ կատարեն վերոգրյալ երկու գործառույթները:

2) Առանձին տեսակի վարչական վարույթ և դրա առանձնահատկություններ նախատեսելու իրավաչափ նպատակը հանրային իշխանության գործառույթների իրականացման առանձին ոլորտում վարչարարության արդյունավետությունը և անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության կառուցակարգերի բարելավումն է, այդ թվում՝

վարչարարության առանձին ոլորտներում իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի գոյության ապահովումը:

3) Առանձին տեսակի վարչական վարույթի նպատակներից ու խնդիրներից ելնելով՝ այն կարող է ունենալ, և նույնիսկ անհրաժեշտ է, որ ունենա առանձնահատկություններ, որպեսզի համապատասխանի տվյալ գործընթացի իրավականության ծավալին, որի չափորոշիչ որպես հանդես է գալիս սահմանադրության «արդյունավետության» սկզբունքը:

4) Իրավական պետության պոզիտիվ պարտականությունն է յուրաքանչյուր առանձին տեսակի վարչական վարույթի իրավասահման (իրավաստեղծ) գործընթացում առաջնորդվել այն հայեցակարգով, որ նախատեսվող իրավակարգավորումների հիմքում պետք է դրված լինեն արդյունավետության և անձի իրավական պաշտպանության սկզբունքները՝ վերջիններիս իրացումը երաշխավորելով համապատասխան կառուցա-կարգերով ու ընթացակարգերով:

5) Առանձին տեսակի վարչական վարույթն իրականացնող իրավասու մարմնի պոզիտիվ պարտականությունն է իրավակիրառ գործընթացում ողջամտորեն հավասարակշռել վարչարարության արդյունավետության և անձի իրավական պաշտպանության սկզբունքների համատեղ իրացումը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության հետազոտության առարկան կազմող հարցերի առնչությամբ կատարված վերլուծությունները, եզրահանգումներն ու առաջարկները կարող են էական նշանակություն ունենալ թե՛ իրավական գործընթացների ուսումնասիրության հարցում՝ ընդհանրապես, թե՛ վարչական գործընթացների և վարչական վարույթի ուսումնասիրության հարցում՝ մասնավորապես: Վերլուծության ենթարկված հարցերով հետաքրքվողների համար ատենախոսության մեջ տեղ գտած տեսական ու գործնական վերլուծությունները կարող են ունենալ ճանաչողական նշանակություն, իսկ հարցերն ուսումնասիրողների համար՝ կարող են ծառայել նաև որպես տեսական հիմք:

Ատենախոսության գործնական նշանակությունը դրսևորվում է նրանով, որ հետազոտության առարկան կազմող հարցերի վերաբերյալ կատարված վերլուծությունները, եզրահանգումներն ու առաջարկները կարող են հիմք հանդիսանալ վարչական վարույթը կարգավորող օրենսդրության հետագա կատարելագործման նպատակով իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացների համար:

Ատենախոսությունը կարող է օգտագործվել նաև «Վարչական իրա-վունք», «Վարչական վարույթ և դատավարություն» և բոլոր այն դասընթաց-ներում, որոնց հետազոտության առարկան առնչվում է վարչաիրավական հարաբերություններին:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Հետազոտության

արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, ինչպես նաև համալսարանական գիտաժողովներին ներկայացրած զեկույցներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից (որոնք բաժանված են ընդհանուր ութ պարագրաֆի), եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության ներածության մեջ հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, ներկայացրել մշակվածության աստիճանը, հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները, մեթոդաբանական հիմքը, նորմատիվ-իրավական և աղբյուրագիտական հիմքերը, գիտագործնական նշանակությունը, արդյունքների հիմնավորվածությունն ու արժանահավատությունը, արդյունքների փորձարկումը, ձևակերպել է գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության 1-ին գլխի՝ «Վարչական վարույթի և առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների սահմանադրական և միջազգային իրավական հիմքերը» վերտառությամբ 1-ին պարագրաֆում անդրադարձ է կատարվել սահմանադրական և միջազգային իրավական կարգավորումներին, ինչի արդյունքում կատարվել է եզրահանգում, որ վարչարարության հիմնարար սկզբունքները համակարգային նշանակություն ունեն բոլոր տեսակի վարչական վարույթների համար: Բացի այդ, հեղինակը կոնկրետ օրինակում ներկայացրել է սկզբունքների գործառույթները, որոնք պետք է որպես ուղենիշ, չափորոշիչ ծառայեն իրավասահման (իրավաստեղծ) ու իրավակիրառ գործունեության համար: Վերջինիս առթիվ հեղինակը հանգել է այն եզրակացությանը, որ վարչարարության հիմնարար սկզբունքները ուրվագծում են առանձին տեսակի վարչական վարույթներին առնչվող իրավասահման (իրավաստեղծ) և իրավակիրառ գործընթացները. կանխորոշում են իրավակարգավորումների բովանդակությունը, իրավունքի բացերի կամ կոլիզիաների դեպքում թույլ չեն տալիս իրավանորմը մեկնաբանել որպես անձանց իրավունքներն ու ազատությունները սահմանափակող և/կամ նրանց համար միջամտող վարչարարություն իրականացնելու իրավական հիմք:

Ատենախոսության 1-ին գլխի՝ «Վարչական վարույթի և առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների ներպետական օրենսդրության էվոլյուցիան» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում հեղինակը իրավահամեմատական և պատմական մեթոդաբանությամբ ներկայացրել է խնդրո առարկային վերաբերելի ներպետական իրավական ակտերի ու դրանցում պարունակվող կարգավորումների էվոլյուցիան՝ վերջինս ներկայացնելով երեք՝ ձևավորման, զարգացման և բարեփոխման փուլերում: Աշխատության սույն հատվածում կատարած հետազո-

տությունների ու վերլուծությունների արդյունքում հեղինակը եկել է այնպիսի հետևությունների, որ ձևավորման փուլում ներպետական իրավական համակարգում գործել են այնպիսի իրավական ակտեր, որոնք կոչված էին կարգավորելու հանրային իշխանության գործունեության այս կամ այն բնագավառները, սակայն ամբողջությամբ չէին հեռվացել խորհրդային վարչական իրավունքի՝ դեպի ռեպրեսիվ, պատժիչ կողմնորոշումներից, իսկ հաջորդ՝ զարգացման փուլում նպատակը եղել է մեկը. ձևավորել իրավական պետությանը բնորոշ վարչական վարույթը կարգավորող օրենսդրություն, որի նպատակն է եղել վարչական իրավունքի կիրառման ընթացքում վարչական մարմնի և քաղաքացու միջև անընդհատ առաջացող շփումները կարգավորել հստակ իրավական սկզբունքներին համապատասխան: Արդեն ներկայիս՝ բարեփոխման փուլում, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել թե՛ պետության կողմից վարչական վարույթը կարգավորող իրավական ակտերում արդյունավետ իրավական միջոցների համալրման պետության պոզիտիվ պարտականության վրա, թե՛ այն հանգամանքի վրա, որ պետական մարմինների կողմից դրսևորվեն անհրաժեշտ կամք ու ջանասիրություն, որպեսզի արդեն իսկ նախատեսված իրավական միջոցները կիրառվեն դրանց նպատակին համապատասխան: Այլ կերպ՝ բարեփոխման փուլի խնդիրները իրավաստեղծ և իրավակիրառ գործընթացներում վարչական վարույթը կարգավորող օրենսդրությունն անձանց հիմնարար իրավունքների և ազատությունների իրացմանն ու պաշտպանությանը ծառայեցնելն է, ինչը բխում է մարդու իրավունքների մարդակենտրոն տեսության գաղափարից՝ կարևորելով նաև պետական ու հանրային շահը:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «Վարչական վարույթի առանձնահատկությունները պայմանավորող գործոնները» պարագրաֆում հեղինակը փորձել է համակարգային վերլուծության միջոցով ներկայացնել այն իրավական և ոչ իրավական օբյեկտիվ իրողությունները, որոնք պատճառ են հանդիսանում առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների համար: Մասնավորապես, արդյունաբերական չորրորդ հեղափոխության, թվային դարաշրջանի, աշխարհաքաղաքական գլոբալ ու տարածաշրջանային միտումների, սոցիալ-մշակութային ու գիտատեխնոլոգիական ոլորտներում տեղի ունեցող շրջադարձային փոփոխությունների, աճող անորոշությունների, մարտահրավերների ու սպառնալիքների ներգործությամբ փոխվում են հասարակական հարաբերությունների դինամիկան, հանրային կյանքի բոլոր ոլորտների վարքագծային տարրերը: Այս փոփոխությունները վկայում են, որ հանրային կառավարման համակարգը՝ որպես բոլոր ոլորտներում պետական քաղաքականություն իրականացնող հարաբերությունների ու ֆունկցիոնալ կապերի բարդ ենթահամակարգ, մշտապես արդիական ու կենսունակ լինելու խնդիր ունի,

ուստի այն չափանիշները, որոնք նախկինում համարվել են արդյունավետ, ներկայումս արդեն խնդրահարույց են, իսկ ապագայում կդառնան անարդյունավետ: Արդյունքում, հաշվի առնելով այս օբյեկտիվ իրողությունները, դրանց բախումներն ու հակազդեցությունները՝ հեղինակը եզրահանգել է, որ պետությունը պետք է հավասարակշռի վարչարարության արդյունավետությունն ու անձի վարչահիրավական պաշտպանությունը միաժամանակ երկու հարթությամբ՝ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների 1) իրավասահման (իրավաստեղծ) ու 2) իրավակիրառ գործընթացներում:

Ատենախոսության 2-րդ գլխի՝ «Առանձին տեսակի վարչական վարույթների իրավական բնութագիրը» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում վարչական վարույթն առավելապես ներկայացվել է համակարգային, դեդուկտիվ ու իրավահամեմատական մեթոդների կիրառմամբ: Առաջին հերթին հեղինակը վարչական վարույթը քննարկել է նյութական և ընթացակարգային իրավունքների հարաբերակցության համատեքստում և ներկայացրել դրա ընթացակարգային բնույթը, որից հետո վարչական վարույթը ներկայացվել է որպես վարչական մարմնի գործունեության տեսակ, որը գործունեության մյուս տեսակներից տարբերվում է իր առավել խիստ կանոնակարգվածության հատկանիշով, ինչն արտահայտվում է կառուցվածքային և ընթացակարգային կողմերով: Արդյունքում, վարչական վարույթի կառուցվածքային և ընթացակարգային հատկանիշներով օժտվածությունը հեղինակին թույլ է տվել հետևություն անել այն մասին, որ առանձին տեսակի վարչական վարույթի առանձնահատկությունները կառուցվածքի և/կամ ընթացակարգի առանձին հատկություններն են:

Ատենախոսության 3-րդ գլխի 1-ին՝ «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների մեթոդաբանական հիմնախնդիրները» պարագրաֆում հեղինակը քննարկել է վարչական վարույթի և առանձին տեսակի վարչական վարույթների համադրման տարբեր մոտեցումներ՝ փորձելով պատմական և իրավահամեմատական մեթոդների միջոցով ներկայացնել նաև օրենսդրի հետապնդած նպատակը: Մասնավորապես, ի սկզբանե օրենսդիրը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին բաժնի գործողությունը չի բացառել նորմատիվ իրավական ակտերի ընդունմամբ եզրափակվող վարչարարության և վարչական իրավախախտումներին վերաբերող հարաբերությունների նկատմամբ, ինչը բավականին ընդունելի և առաջադեմ քայլ է եղել: Սակայն, հետաքրքիրն այն է, որ օրենսդիրը Օրենքի 1-ին բաժնի դրույթները կիառելի է համարել նաև դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա, ինչը, կարծում ենք, բավականին հետաքրքիր առանձին ատենախոսական աշխատանքի նյութ կարող է հանդիսանալ: Հետագա օրենսդրական փոփոխությունների արդյունքում

ամրագրվել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի II-VII բաժինների գործողությունը չի տարածվում վարչական իրավախախտումներին վերաբերող հարաբերությունների վրա, իսկ ընդհանրապես օրենքի գործողությունը չի տարածվում դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա: Փաստորեն, օրենսդիրը չի հրաժարվել 1-ին բաժնի դրույթները կիրառել վարչական իրավախախտումներին վերաբերող հարաբերությունների վրա՝ ի տարբերություն դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների, որոնց վերաբերյալ հատուկ նշում է նախատեսել առ այն, որ տվյալ օրենքի գործողությունն ընդհանրապես չի տարածվում այդ հարաբերությունների վրա: Արդյունքում հետևում է, որ օրենսդիրը, վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթը համարելով առանձին տեսակի վարչական վարույթ, ի սկզբանե բացառել էր վարչական իրավախախտումների գործերի վարույթի նկատմամբ այդ օրենքի վարչական վարույթը կարգավորող նորմերի կիրառումը, իսկ հետագայում թույլատրել միայն 1-ին բաժնի դրույթների կիրառումը այդ վարույթի նկատմամբ: Վերոգրյալի հաշվառմամբ հեղինակը տրամաբանական է համարում այնպիսի հետևությունը, որ հետագայում օրենսդիրը փոփոխության անհրաժեշտությունը կարող է պայմանավորած լինել այն հանգամանքով, որ առանձին տեսակի վարչական վարույթ է ոչ միայն վարչական իրավախախտումների գործերի վարույթը, այլև՝ առանձին օրենքներով նախատեսված մյուս բոլոր վարչական վարույթները: Միևնույն ժամանակ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի համակարգային վերլուծությամբ ուշադրության է արժանացվել նաև այն հանգամանքը, որ այդ օրենքի մի շարք հոդվածներ, սահմանելով իմպերատիվ պահանջներ, միևնույն ժամանակ թույլ են տալիս բացառություններ, այսինքն՝ օրենսդիրը ոչ միայն չի բացառել, այլ նաև իրավական հիմք է նախատեսել, որ առանձին օրենքներով կարգավորվող վարչական վարույթների նկատմամբ կարող են կիրառվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի վարչական վարույթը կարգավորող իրավական դրույթները:

Բացի այդ, այս պարագրաֆում առանձնակի անդրադարձ է կատարվել նաև այնպիսի իրավական գործընթացներին, որոնք արհեստականորեն դուրս են մնացել հանրային իրավահարաբերությունների շարքից, որոնք հեղինակը բնութագրել է որպես «ֆիկտիվ» մասնավոր իրավահարաբերություններ:

Ատենախոսության 3-րդ գլխի 2-րդ՝ «Առանձին տեսակի վարչական վարույթների իրավականության ընդհանուր չափորոշիչները» վերտառությամբ պարագրաֆում փորձ է արվել տելեոլոգիական (նպատակային) բնույթով պայմանավորված կատարել առանձին տեսակի

վարչական վարույթների դասակարգում՝ «արդյունավետ միջոց» իրավական կանոնի լույսի ներքո ներկայացնելով դրանցից յուրաքանչյուրի իրավականության ծավալը: Ըստ հեղինակի՝ հանրային իրավահարաբերություններում անձանց սուբյեկտիվ իրավունքների իրականացման մեկ միասնական կառուցակարգի առկայությունն ինքնին ողջունելի է, սակայն խնդրահարույց է այն, որ տվյալ իրավական ընթացակարգը ոչ միայն ծառայում է անձանց իրավունքների իրականացմանը (իրացմանը), այլ նաև անձանց համար պարտականություններ նախատեսելուն և իրավունքների վարչահիրավական պաշտպանությանը: Հեղինակը խնդիր է տեսնում, քանի որ հատուկ իրականացվող ցանկացած գործունեություն, ինչպես և վարչական վարույթը, ունի որոշակի նպատակային նշանակություն: Վերջինս կանխորոշում է տվյալ իրավական գործընթացի հիմնական առանձնահատկությունները, վարույթի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, վարույթն իրականացնող մարմնի լիազորությունները և այլն: Արդյունքում՝ հեղինակը հետևություններ է անում առ այն, որ անձանց իրավունքների իրականացման կապակցությամբ հարուցված վարչական վարույթի նպատակները չեն կարող նույնացվել անձի բողոքի հիման վրա կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի նպատակներին, ինչից էլ հետևում է, որ անձանց իրավունքների իրականացման կապակցությամբ անձանց դիմումի հիման վրա իրականացվող վարչական վարույթը կարող է, և նույնիսկ անհրաժեշտ է, որ ունենա առանձնահատկություններ անձանց իրավունքների վարչական պաշտպանության նպատակով վարչական բողոքի հիման վրա իրականացվող վարչական վարույթից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ իրականացվող վարչական վարույթից՝ առավել ևս:

Ատենախոսության 3-րդ գլխի՝ «Վարչական մարմնի բնորոշումը առանձին տեսակի վարչական վարույթների դասակարգման և իրավականության համատեքստում» վերտառությամբ 3-րդ պարագրաֆում քննարկվել է «վարչական մարմին» եզրույթի առնչությամբ առկա որոշ հիմնախնդիրներ, որոնց վերաբերյալ համակարգային վերլուծության, պատմական ու իրավահամեմատական մեթոդների կիրառումը թույլ է տվել հեղինակին ներկայացնելու գիտագործնական նշանակություն ունեցող որոշ առաջարկություններ: Հեղինակը ուշադրության է արժանացրել այն հանգամանքը, որ հանրային իշխանության այս կամ այն մարմինը վարչական մարմին համարելու հարցի հստակեցումը ունի կարևոր իրավական նշանակություն, որը քննարկել է երկու համատեքստում. 1) հանրային իշխանության մարմնի գործունեության նկատմամբ կիրառելի է վարչական վարույթը կարգավորող օրենսդրությունը, քանի որ այն համարվում է վարչական մարմին, և 2) հանրային իշխանության մարմինը համարվում է վարչական մարմին, քանի որ նրա գործունեության նկատմամբ

կիրառելի է վարչական վարույթը կարգավորող օրենսդրությունը: Այս մոտեցումներից առաջինը ենթադրում է, որ վարչական վարույթը կարգավորող օրենսդրությամբ անհրաժեշտություն է հստակորեն սահմանել այն պետական մարմինների սպառիչ շրջանակը, որոնք համարվում են վարչական մարմիններ, որպեսզի նրանց գործունեության նկատմամբ կիրառվի վարչական վարույթը կարգավորող օրենսդրությունը, իսկ երկրորդի դեպքում՝ անհրաժեշտ է սահմանել ոչ թե վարչական մարմին հանդիսացող պետական մարմինների սպառիչ շրջանակը, այլ այն գործունեությունների սպառիչ տեսակները, որոնց նկատմամբ կիրառելի է այդ օրենսդրությունը, ինչը տրամաբանորեն անուղղակի կերպով կբացահայտի վարչական մարմին հանդիսացող հանրային իշխանության մարմիններին:

Այս համատեքստում հեղինակը նկատել է նաև, որ վարչական մարմնի՝ նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեության տեսակի առնչությամբ առկա է անհրաժեշտություն համապատասխան օրենսդրական փոփոխությամբ հստակեցնել, որ խոսքը, բացառապես, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեության մասին է:

Ատենախոսության 3-րդ գլխի 4-րդ՝ «Առանձին տեսակի վարչական վարույթների գործառութավորված (մասնագիտացված) բնույթը որպես չափորոշիչ» վերտառությամբ պարագրաֆում հեղինակը անդրադարձել է առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների իրավասահման գործընթացին, մասնավորապես, այդ իրավական ակտերի ընդունման և/կամ փոփոխություն կատարելու օրինաստեղծ գործընթացի ժամանակ օրենսդիր մարմնում համապատասխան օրենսդրական նախագծերը զեկուցող սուբյեկտակազմին: Ուսումնասիրության արդյունքում հեղինակն արձանագրել է, որ առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները կարգավորող իրավական ակտերի ընդունման և/կամ փոփոխություն կատարելու օրինաստեղծ գործընթացի ժամանակ օրենսդիր մարմնում համապատասխան օրենսդրական նախագիծը զեկուցում է այդ ոլորտում, բնագավառում քաղաքականությունը մշակող կամ այդ ոլորտում կառավարչական լիազորություններ իրականացնող պետական մարմնի պաշտոնատար անձը: Հեղինակը ներկայացրել է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի օրինակը, երբ զեկուցմամբ հիմնականում հանդես է եկել է ֆինանսատնտեսական ոլորտում քաղաքականությունը մշակող կամ այդ ոլորտում կառավարչական լիազորություններ իրականացնող պետական մարմնի պաշտոնատար անձը, ինչը թույլ է տվել պնդելու, որ տվյալ իրավական ակտով կարգավորվող առանձին տեսակի վարչական վարույթի

բնույթն օժտված է ֆինանսական ու տնտեսական գործոններով, որոնք, որպես նախադրյալ (հիմք, պայման), կանխորոշում են այդ վարույթի առանձնահատկությունները: Արդյունքում՝ հեղինակը կատարած հետազոտությունների ու վերլուծությունների հիման վրա արձանագրել է ընդհանուր իրավասության և գործառութավորված (մասնագիտացված) վարչական վարույթների գոյությունը:

Ատենախոսության եզրակացությունում առանձնացվել են հետևյալ եզրահանգումները՝

1) Վարչական վարույթը կարգավորող օրենսդրության սահմանադրական և միջազգային իրավական կարգավորումները սահմանում են ընդհանրապես վարչարարության հիմնադրույթները, հիմնարար սկզբունքները, որոնք կանխորոշում, ուրվագծում են առանձին տեսակի վարչական վարույթներին առնչվող իրավասահման (իրավաստեղծ) և իրավակիրառ գործընթացները, կանխորոշում են այդ իրավակարգավորումների բովանդակությունը, իրավունքի բացերի կամ կոլիզիաների դեպքում թույլ չեն տալիս իրավանորմը մեկնաբանել որպես անձանց իրավունքներն ու ազատությունները սահմանափակող և/կամ նրանց համար միջամտող վարչարարություն իրականացնելու իրավական հիմք: Բացի այդ, սահմանադրահիրավական և միջազգային իրավական հիմքերը արտահայտում են ընդհանրապես վարչական վարույթի և մասնավորապես առանձին տեսակի վարչական վարույթների էությունն ու նշանակությունը: Արդեն վարչարարության հիմնարար սկզբունքների մասին կարելի է նշել, որ դրանք հանդես են գալիս որպես տարբեր տեսակի վարչական վարույթների համակարգաստեղծ կապեր, ինչպես նաև առանձնահատկությունների չափորոշիչներ:

2) Վարչական վարույթը կարգավորող օրենսդրությունը Հայաստանի Հանրապետությունում անցել է զարգացման երեք փուլեր՝ 1) ձևավորման, 2) կայացման և 3) բարեփոխման: Ներկայիս՝ բարեփոխման փուլի խնդիրներն են՝ 1) վարչական վարույթը կարգավորող օրենսդրության ոլորտում սահմանադրական և միջազգային իրավական հիմնադրույթներին համապատասխանող արդյունավետ իրավական միջոցների, մեխանիզմների համալրումը և 2) պետական մարմինների (դրանց պաշտոնատար անձանց) կողմից անհրաժեշտ կամքի ու ջանասիրության դրսևորում վարչական վարույթ/ներ իրականացնելիս, որպեսզի արդեն իսկ նախատեսված իրավական միջոցները կիրառվեն դրանց նպատակին համապատասխան:

3) Վարչարարության արդյունավետության սկզբունքը մշտապես հակազդեցության մեջ է գտնվում անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության սկզբունքի հետ, ուստի ոլորտը կարգավորող իրավական դաշտի բարելավման համար անհրաժեշտ է ամենից առաջ

հստակ սահմանել վարչարարության արդյունավետության և անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության սկզբունքների հավասարակշռման անհրաժեշտությունը, այլ կերպ՝ հարկավոր է նկատի ունենալ, որ արդյունավետության և անձանց իրավունքների պաշտպանության սկզբունքները ոչ թե հակադրվում են միմյանց, այլ վարչարարական գործընթացները կարգավորող օրենսդրությունում դրանք պետք է համադրվեն, ինչից էլ հետևում և բխում է, որ 1) իրավական պետության պարտականությունն է յուրաքանչյուր առանձին տեսակի վարչական վարույթի իրավասահման /իրավաստեղծ/ գործընթացում առաջնորդվել այն հայեցակարգով, որ նախատեսվող իրավակարգավորումների հիմքում պետք է դրված լինեն արդյունավետության և անձի իրավական պաշտպանության սկզբունքները՝ վերջիններիս իրացումը երաշխավորելով համապատասխան կառուցակարգերով ու ընթացակարգերով և 2) առանձին տեսակի վարչական վարույթն իրականացնող իրավասու մարմնի պարտականությունն է իրավակիրառ գործընթացում ողջամտորեն հավասարակշռել վարչարարության արդյունավետության և անձի իրավական պաշտպանության սկզբունքների համատեղ իրացումը: Ամփոփ՝ առանձին տեսակի վարչական վարույթ և դրա առանձնահատկություններ նախատեսելու իրավաչափ նպատակը այդ ոլորտում արդյունավետ իրավական միջոցի և անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության կառուցակարգերի բարելավումն է, ընդ որում վարչական վարույթի առանձնահատկություններ սահմանելիս անհրաժեշտ է պահպանել վարչարարության արդյունավետությանը ծառայող և անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը ծառայող կարգավորումների միջև ողջամիտ հավասարակշռությունը:

4) Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները հանրային իշխանության գործառույթների արդյունավետ իրականացման և անձանց իրավունքներն ու օրինական շահերը առավել երաշխավորելու համար առանձին ոլորտներում վարչական վարույթի կառուցվածքային և/կամ ընթացակարգային հատուկ կանոններ են: Միևնույն ժամանակ առանձին տեսակի վարչական վարույթներում անձինք երաշխավորված են սահմանադրությամբ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված իրավունքների ու ազատությունների պաշտպանության հիմնարար դրույթներով:

5) Վարչական վարույթը ներկայիս սոցիալ-իրավական միջավայրում առաջնահերթ դրսևորվում է որպես իրավունքների իրականացման, ինչպես նաև իրավունքների պաշտպանության կառուցակարգ, որի իրավականության ծավալի չափորոշիչ է պատշաճ վարչարարության իրավունքը, ինչպես նաև իրավական գործընթացի արդյունավետության սկզբունքը: Ընդ որում, ըստ վարչական վարույթի նպատակային բնույթի՝ փոփոխության է

ենթարկվում վարչական վարույթի իրավականության ծավալն ու արդյունավետության բովանդակությունը, ինչից հետևում է, որ 1) նպատակային բնույթով պայմանավորված հնարավոր է տարբերակել անձի իրավունքների ճանաչման (սահմանման) նպատակով հարուցված, անձի բողոքի հիման վրա հարուցված, ինչպես նաև վարչական մարմնի նախաձեռնությամբ անձի համար միջամտող ակտ ընդունելու նպատակով հարուցված վարչական վարույթներ և 2) միայն տվյալ վարչական վարույթի նպատակներից և խնդիրներից ելնելով այն կարող է և նույնիսկ անհրաժեշտ է, որ ունենա առանձնահատկություններ, որպեսզի համապատասխանի տվյալ գործընթացի իրավականության ծավալին՝ որպես առանձնահատկությունների սահմանման չափորոշիչ:

6) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքին համապատասխան իրականացվող վարչական վարույթն ընդհանուր է բոլոր պետական մարմինների կամ բոլոր ոլորտներում այդպիսի գործընթացների պարագայում, եթե առկա չէ գործընթացի համար առանձնահատկություններ նախատեսող իրավական ակտ, ուստիև պայմանականորեն վարչական վարույթները կարող ենք դասակարգել՝ ընդհանուր իրավասության վարչական վարույթի, իսկ առանձին տեսակի վարչական վարույթները՝ մասնագիտացված կամ գործառութավորված վարչական վարույթների:

7) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով որպես վարչարարության եզրույթի բնորոշման հատկանիշ նորմատիվ իրավական ակտը պետք է ընկալվի բացառապես ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը, այսինքն՝ տվյալ իրավակարգավորման մեջ պետք է կատարել համապատասխան փոփոխություն և հստակեցնել, որ խոսքը վերաբերում է, բացառապես, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտին և ոչ երբեք նաև օրենսդրական ակտին:

8) Այն իրավահարաբերությունները, որոնք ըստ էության հանդիսանում են հանրային՝ մասնավորապես համապատասխանում են հանրային իրավահարաբերության իրավակիրառ պրակտիկայում տրված չափանիշներին, և դրա ընթացակարգը կարող է համարվել առանձին տեսակի վարչական վարույթ, սակայն օրենսդրի կողմից մեխանիկորեն դասակարգվում են մասնավոր իրավունքի բնագավառին հանդիսանում են «ֆիկտիվ» մասնավոր իրավահարաբերություններ, և այդ հարաբերություններում երաշխավորված չեն անձանց Սահմանադրության 61-րդ և 75-րդ հոդվածներով սահմանված հիմնական իրավունքները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1) Նորայր Ավագյան, «Առանձին տեսակի վարչական վարույթների տարբերակման մեթոդաբանական հիմնախնդիրները» // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 1 (1) 2019, Երևան, 2020, էջ 44-53:

2) Նորայր Ավագյան, «Առանձին տեսակի վարչական վարույթների նախադրյալները» // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 1 (2) 2020, Երևան, 2021, էջ 107-116:

3) Նորայր Ավագյան, «Առանձին տեսակի վարչական վարույթների դասակարգման և իրավականության հիմնահարցերը» // Դատական իշխանություն, ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ 2022 1-3 (271-273), էջ 20-27:

4) Норайр Авагян, “Лицензирование как отдельный вид административного производства (научно-практический анализ законодательства Республики Арцах)”, Научный Арцах, №1(12), 2022, АРЦАХ, Ереван, 2022, стр. 35-44.

5) Նորայր Ավագյան, «Վարչական վարույթի առանձին տեսակների առանձնահատկությունների ընդհանուր բնութագիրը», Պետություն և իրավունք, թիվ 1 (92), Երևան, 2022, էջ 62-67:

6) Նորայր Ավագյան, «Վարչական մարմին հասկացությունը առանձին տեսակի վարչական վարույթների համատեքստում» // Արդարադատություն, 2022 1 (56), էջ 54-60:

7) Նորայր Ավագյան, «Վարչական իրավունքի և վարչական վարույթը կարգավորող իրավունքի հարաբերակցությունը», Պետություն և իրավունք, թիվ 2 (93), Երևան, 2022, էջ 20-29:

8) Նորայր Ավագյան, «Առանձին տեսակի վարչական վարույթների իրավականության ընդհանուր չափորոշիչները» // Դատական իշխանություն, ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ 2023 1-3 (283-285), էջ 23-33:

9) Նորայր Ավագյան, «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկություններին առնչվող որոշ հիմնահարցեր», Պետություն և իրավունք, թիվ 1 (95), Երևան, 2023, էջ 12-18:

NORAYR ARTASH AVAGYAN

CRITERIA FOR SPECIFIC FEATURES OF CERTAIN TYPES OF ADMINISTRATIVE PROCEEDINGS

Summary

The topic of this dissertation is relevant and relates to the study of currently relevant issues of administrative proceedings and administration. The author properly conducted a comprehensive study concerning the certain types of administrative proceedings.

The dissertation highlights the fundamental qualities that may be suitable for improving the legislation of administrative proceedings according to predictable criteria. In conclusion, the author put forward the following reasoned positions:

1) administrative proceedings in the modern social and legal environment are primarily manifested as a legal instrument for the implementation and protection of rights,

2) along with the right of proper administration, the criterion of the scope of the legality of administrative proceedings is the constitutional and legal principle of the "effectiveness" of the process,

3) according to the purposeful nature the scope of the legality and the content of the effectiveness of administrative proceeding is changing,

4) Due to the purposeful nature, it is possible to distinguish between administrative proceedings initiated for the implementation of a person's rights, initiated on the basis of a person's complaint, as well as initiated proceedings to adopt an intervening act for a person on the initiative of an administrative body,

5) only based on the purposes and problems of administrative proceedings, it may and even must have features, in order to correspond to the scope of legality of this process as a criteria for determining the features.

In addition, the author built his dissertation on the basis of the concept that in order to improve the legal framework, it is first of all necessary to clearly

define the need to balance the principles of the efficiency of administration and the protection of the human rights.

As a result, the author concluded that:

1) the existence of certain types of administrative proceedings has a dual purpose. (1) ensuring the effectiveness of the implementation of public authority functions in individual spheres of administration, and (2) ensuring the guaranteed realization and protection of the rights and freedoms of individuals and legal entities participating in individual spheres of administration. The special structural or procedural rules of administrative proceedings in the legal system must fulfill the above two functions at the same time.

2) The legitimate purpose of providing for a specific type of administrative procedure and its features is to increase the efficiency of administration in a specific area of public authority implementation and the improvement of structures for the protection of rights and freedoms of individuals, including ensuring the existence of an effective means of protection of rights in individual areas of administration.

3) It is the duty of the legal state to be guided by the concept that the principles of efficiency administration and legal protection of the individual should be laid at the basis of the legal regulations, guaranteeing the realization of the latter with appropriate institutional structers and procedures.

4) It is the duty of the competent body implementing a particular type of administrative procedure to reasonably balance the joint realization of the principles of administrative efficiency and legal protection of the person in the legal process.

НОРАЙР АРТАШОВИЧ АВАГЯН

КРИТЕРИИ ОСОБЕННОСТЕЙ ОТДЕЛЬНЫХ ВИДОВ АДМИНИСТРАТИВНОГО ПРОИЗВОДСТВА

Резюме

Тема данной диссертации является актуальной и связана с изучением актуальных на сегодняшний день вопросов административного производства и администрирования. Автор надлежащим образом провел комплексное исследование относительно отдельных видов административного производства.

В диссертации выделяются фундаментальные качества, которые могут подойти для совершенствования законодательства по предсказуемым критериям. В заключении автор выдвинул следующие аргументированные позиции:

1) административное производство в современной социально-правовой среде в первую очередь проявляется как правовой инструмент реализации и защиты прав,

2) наряду с правом надлежащего администрирования критерием объема легальности административного производства является конституционно-правовой принцип «эффективность» процесса,

3) по целевому характеру изменяется объем легальности и содержание эффективности административного производства,

4) В силу целенаправленного характера можно различать административные производства, возбужденные для реализации прав лица, возбужденные на основании жалобы лица, а также возбужденные производства о принятии в отношении лица по инициативе обеспечительных мер административного органа,

5) только исходя из целей и задач административного производства может и даже должен иметь особенности, чтобы соответствовать объему легальности этого процесса как критерию определения особенностей.

Кроме того, автор строил свою диссертацию на основе концепции о том, что для совершенствования правовой базы в первую очередь

необходимо четко определить необходимость баланса принципов эффективности управления и защиты прав и свободы человек.

В результате автор пришел к выводу, что:

1) существование отдельных видов административного производства имеет двоякое значение. (1) обеспечение эффективности реализации функций публичной власти в отдельных сферах управления и (2) обеспечение гарантированной реализации и защиты прав и свобод физических и юридических лиц, участвующих в отдельных сферах управления. Специальные структурные или процессуальные правила административного производства в правовой системе должны выполнять две вышеуказанные функции одновременно.

2) Легитимной целью установления конкретного вида административной процедуры и ее особенностей является повышение эффективности управления в конкретной сфере осуществления государственной власти и совершенствование структур защиты прав и свобод личности, в том числе обеспечение наличия эффективных средств защиты прав в отдельных сферах администрирования.

3) Обязанность правового государства - руководствоваться тем, что принципы эффективности администрирования и правовой защиты личности должны быть заложены в основу правовых норм, гарантирующих реализацию последних соответствующими структурами и процедурами.

4) Обязанность компетентного органа, осуществляющего тот или иной вид административной процедуры, - разумно сбалансировать совместную реализацию принципов эффективности администрирования и правовой защиты личности.